## *ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*

## *ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

Պատվիրատուն՝ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը, որը գտնվում է ք. Երևան,Վազգեն Սարգսյան 3/3 հասցեում, ստորև ներկայացնում է ՏԿՆ-ԲՄԱԾՁԲ-2018/11Ծ ծածկագրով բաց մրցույթ ընթացակարգի արդյունքում 2018թ ապրիլի 23-ին կնքված պայմանագրում 2018թ ապրիլի 23-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: Պայմանագրի ֆինանսական միջոցների տրամադրում:

Փոփոխության նկարագրություն: Մ5, Արմավիր-Սարդարապատի հուշահամալիր ավտոճանապարհի կմ43+800-կմ53+235 հատվածի ասֆալտապատման աշխատանքներ:

Համաձայնագրի գինը կազմում է 1 094 964 000 ՀՀ դրամ

Փոփոխության հիմնավորում *2018թ. ՀՀ պետական բյուջեի մասին օրենք /ՀՀ կառավարության 2018 թվականի մարտի 29-ի թիվ 329-Ն որոշում/:*

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Սամվել Թամրազյանին:

Հեռախոս՝ 010 59-00-47

Պատվիրատու՝ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ թիվ 1
# 23.04.2018թ. ԿՆՔՎԱԾ N ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/11Շ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան «23» ապրիլի 2018թ.

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը, ի դեմս Գլխավոր քարտուղարության աշխատակազմի ղեկավար Ս. Ամիրխանյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Կապավոր» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա.Աբաղյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, միասին այսուհետև՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, և հիմք ընդունելով Կողմերի միջև 23.04.2018թ. ԿՆՔՎԱԾ N ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/11Շ պետական գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

Կողմերը համաձայնվեցին.

1.1 Հաստատել Համաձայնագրի 2018թ. վճարման ժամանակացույցը համաձայն հավելվածի (կցվում է).

1.2 Լրացնել պայմանագրում 5.1.1 կետը հետևյալ խմբագրմամբ << Պայմանագրի գնից՝ մինչև 547 482 000 (հինգ հարյուր քառասունյոթ միլիոն չորս հարյուր ութսուներկու հազար) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր վճարում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ :

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը կնքվում է հայերեն լեզվով երկու օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

**Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության | «Կապավոր» ՍՊԸ |
| ՀՀ ք.Երևան, Վազգեն Սարգսյան 3/3, | ԼՂՀ Ստեփանակերտ, Աշոտինյա 2 |
| ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն | «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ |
| ՀՎՀՀ 02565518 | ՀՎՀՀ 90003442 |
| ՀՀ 900011019800 | ՀՀ 163008123412 |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

ԿԱՊԱՎՈՐ КАПАВОР KAPAVOR NKR c.Stepanakert LTD 90003442

Հաստատված է
N ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/11Ճ գնման պայմանագրի
«-----» ապրիլի 2018թ. կնքված
թիվ 1 Համաձայնագրով

ՀԱՎԵԼՎԱԾ

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | **Ընդամենը** |
| 1 | 45231177/1050 | *Մ5, Արմավիր-Մարգարապարի հուշահամալիր ավտոճանապարհի կմ 43+800 - կմ 53+235 հատվածի ասֆալտապատման աշխատանքների* | - | - | - | 1 094 964 000 | 1 094 964 000 | 1 094 964 000 | 1 094 964 000 | 1 094 964 000 | 1 094 964 000 | 1 094 964 000 | 1 094 964 000 | 1 094 964 000 | 1 094 964 000 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության
ՀՀ ք.Երևան, Վազգեն Սարգսյան 3/3,
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02565518
ՀՀ 900011019800

----------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Կապավոր» ՍՊԸ
ԼՂՀ Ստեփանակերտ, Աջափնյա 2
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
ՀՎՀՀ 90003442
ՀՀ 163008123412

----------------------------
/ստորագրություն/